ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏԻՉՅԱՆ ԱՆՆԱ ՇԱՀԵՆԻ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 1988-1994 ԹԹ. ՀՀ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Ժ. 01.06 - «ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մարտիրոսյան Նաղաշ Նարինբեկի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երիցյան Սերգո Սարգսի

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ասկարյան Շուշան Ռոբերտի

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հունիսի 29-ին՝ ժամը 12^{00}-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան $52^{ա}$, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալբերտ Մակարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատությունը նվիրված է ղարաբաղյան շարժմանը և դրա արձագանքներին հայաստանյան մամուլում 1988-1994 թվականներին: Այստեղ գիտաքննորեն ներկայացվել են ղարաբաղյան շարժման ծնունդը և ծավալվող իրադարձությունները խորհրդային գաղափարախոսության պայմաններում, պատերազմը անկախության առաջին տարիներին և հայ-ադրբեջանական հակամարտությունը հայաստանյան մամուլի դիտանկյունից: Ուսումնասիրվել են հայաստանյան հեղինակավոր պարբերականների այն հրապարակումները, որոնք առնչվում են Լեռնային Ղարաբաղին: Քննության են ենթարկվել այդ հրապարակումների առանձնահատկությունները, ներկայացվել թեմատիկ շեշտադրումները, լրագրային դրսևորումները: Աշխատությունը փորձ է՝ համապարփակ պատկերացում տալու հայ ժողովրդի նորօրյա պատմության այդ ժամանակահատվածում մամուլի դերի և նշանակության մասին, նաև վերլուծելու դրանց ազդեցությունը զարգացող իրադարձությունների, հասարակական գիտակցության և տրամադրությունների վրա: Ավելին՝ վերլուծվել է ոչ միայն մամուլի, այլև լրագրողների և մտավորական հրապարակախոսների ու նրանց հեղինակած հոդվածների յուրահատկությունները՝ լսարանի վրա ներգործության համատեքստում:

ՁԼՄ-ները և հատկապես մամուլը այս տեսակետից հաճախ քննադատվում է: Քանի որ մեդիայի, տվյալ դեպքում՝ պարբերական մամուլի քննությունն ըստ էության տվյալ պետության ու հասարակության պատմության որոշակի ժամանակահատվածի ուսումնասիրությունն է, դրա ընթացիկ ու խորքային իրողությունների վերհանումը, ուստի արցախյան հիմնահարցի ներկայիս իրողությունները առավել քան ստիպում են ուսումնասիրել խնդրի ակունքները, միաժամանակ քննության նյութ դարձնել և վերարժևորել ղարաբաղյան շարժումը, պատերազմը, այդ շրջանի մամուլի և լրագրողների, հրապարակախոսների գործունեությունը: Ղարաբաղյան հիմնախնդիրն ու շարժումն առավել համակողմանի ըմբռնելու և ներկայացնելու համար կարևոր միջոց է այդ շրջանի հայաստանյան մամուլի հետազոտությունը, որովհետև համազգային հիմնահարցերը բարձրաձայնվում էին ոչ միայն հրապարակներում ու դահլիճներում, այլև ժամանակի մամուլում: Սույն ատենախոսությունը նվիրված է այս և այլ կարևոր հարցերի քննությանը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

21-րդ դարում, երբ համաշխարհայնացման գործընթացներն աննախադեպ արագությամբ են մուտք գործում նաև հայաստանյան իրականություն, մեծապես կարևորվում են հայոց ազգային ինքնությանն ու դրա պահպանմանն ուղղված պայքարի, դրա առանձին տարրերի վերհանմանը նվիրված աշխատանքները: Ուսումնասիրվող թեման այսօր արդիական է առավել, քան երբևէ, քանի որ Արցախի Հան-

ռապետությունը երեք տասնամյակից ավելի գոյություն ունեցող պետություն է՝ կայացած պետական ինստիտուտներով, մինչդեռ այն դեռևս ճանաչված չէ աշխարհի որևէ պետության կողմից: Շարժման սկզբնավորումից անցել են տասնամյակներ, և Լեռնային Ղարաբաղի խնդիրը շարունակում է մնալ տարբեր երկրների ոչ միայն դիվանագիտական ատյանների ու քաղաքագետների, այլև գիտնականների, հասարակական գործիչների և մեդիայի տեսադաշտում: Ավելին՝ այս հակամարտության լուծումը մեծ տերությունների արտաքին քաղաքականության խնդիրներից է, և աշխարհաքաղաքական տարբեր բևեռներ և երկրներ, ստանձնելով միջնորդի դերը, հետապնդում են իրենց շահերը՝ տարածաշրջանում սեփական ազդեցությունը հաստատելու, վերականգնելու, քաղաքականապես և տնտեսապես հավասարվելու նպատակով: Ավելին՝ հաշվի առնելով 2020 թ.-ի արցախյան պատերազմի արդյունքները, տեղեկատվական հարթությունում տեղի ունեցած և շարունակաբար ընթացող ակտիվ «մարտերը», սույն հետազոտությունը հիմնախնդրի էության ու պրոբլեմատիկայի լուսաբանման համար ուղղորդիչ նշանակություն կարող է ունենալ: Ստեղծված իրավիճակն առավել քան հիմք է տարբեր դիտանկյուններից ուսումնասիրելու հայկական Արցախի պատմությունը. այդ առումով մեդիան և մեդիադաշտի հետազոտությունը մեծ կարևորություն ունի՝ քաղաքական, ռազմական, դիվանագիտական ճակատներին զուգահեռ:

Ատենախոսությունը փորձ է՝ գիտականորեն իմաստավորելու նշյալ ժամանակահատվածում հայաստանյան մամուլի դերը իրադարձությունների զարգացման և հասարակության վրա ազդեցություն ունենալու տեսանկյուններից: Մեր ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել առավել համակարգային հետազոտության համար, որը խնդիր կունենա քննարկելու մամուլի ազդեցությունը լսարանի վրա կամ առհասարակ մամուլի դերը համակարտությունների մեջ: Այստեղից էլ բխում է աշխատանքի գիտագործնական նշանակությունը: Ներկայացված նյութը և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել վերոնշյալ ժամանակահատվածի հայ մամուլի պատմության, հակամարտությունների, զգայուն թեմաների լուսաբանման վերաբերյալ առավել ընդհանրացված աշխատություններ ստեղծելու, բուհերում տվյալ թեմայով կարդացվող դասախոսությունների համար: Սույն հետազոտությունը կարող է նյութ տրամադրել մեդիաուսումնասիրությունների, հակամարտությունների լրագրության, տեղեկատվական պատերազմների, հոգեբանության և գիտական այլ ոլորտների համար: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել նաև գործնական լրագրության համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության **առարկան** ղարաբաղյան շարժումն է՝ ժամանակի հայաստանյան մամուլի արտացոլմամբ, հետևաբար և խորամուխ չլինելով քաղաքական, դիվանագիտական ձեռնարկումների, պատմական անցքերի, հակամարտող երկրների ներքաղաքական զարգացումների, սոցիալ-տնտեսական կացությանը վերաբերող հարցերի մեջ՝ անդրադարձել ենք դրանց այնքանով, որքանով առնչվում

են թեմային կամ էական ազդեցություն են ունեցել մամուլի և դրանում իրադարձությունների լուսաբանման վրա:

Ատենախոսության **նպատակը** ղարաբաղյան շարժման լրագրողական արտացոլման առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունն է և դրանց հիմնական օրինաչափությունների վերհանումը 1988-1994 թթ. Հայաստանյան հեղինակավոր պարբերականներում, ինչպես նաև մամուլի դերը զարգացող իրադարձությունների և հասարակական տրամադրությունների վրա խորհրդային գաղափարախոսության պայմաններում և անկախ Հայաստանի առաջին տարիներին: Վերոնշյալ նպատակից են բխում ատենախոսության հիմնական **խնդիրները**.

- քննության առնել ղարաբաղյան իրադարձությունների արտացոլումը մամուլում 1988-1994 թթ. ընթացքում, շեշտադրել մամուլի, լրագրողի դերը, ինչպես նաև համեմատական վերլուծության միջոցով բացահայտել դրանցում ընդհանրություններն ու տարբերությունները,
- ուսումնասիրել մամուլի դերը ԽՍՀՄ-Հայաստան-Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան փոխհարաբերությունների նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորման գործընթացում,
- վերլուծել իրավական գործընթացների, հասարակական տրամադրությունների, պատերազմի ու խաղաղության հիմնական ուղենիշների վերաբերյալ պարբերական մամուլի մեկնաբանությունները, գնահատականներն ու լուսաբանման առանձնահատկությունները,
- պարզաբանել, թե ինչ հստակ փոխակերպում է տեղի ունեցել մամուլում ղարաբաղյան հիմնախնդիրը լուսաբանելու գործում Խորհրդային Միության փլուզումից հետո և Հայաստանի անկախության պայմաններում, ինչ որակ է ձեռք բերել վերոհիշյալ լուսաբանումը պատերազմի տարիներին:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Խոսելով թեմայի գիտական մշակվածության մասին՝ պետք է առանձնացնել ղարաբաղյան շարժմանն ու հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականությունն ընդհանրապես և առանձին դեպքերում գիտական հոդվածներ մամուլի գործունեության վերաբերյալ մասնավորապես: Հիմնախնդրի, նրա առանձին կողմերի վերաբերյալ լույս են տեսել մի շարք հոդվածներ, մենագրություններ[1], որտեղ ներկայացված են խնդրին առնչվող հետաքրքրական ու արժեքավոր դիտարկումներ ու մտքեր, բայց խորհրդային և հետխորհրդային տարիների հայաստանյան մամուլի քննությունը՝ ղարաբաղյան շարժման լուսաբանման տեսանկյունից, չի արժանացել

[1] Տե՛ս **Գալստյան Հ.**, «Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ», Երևան, 2002 թ., **Հակոբյան Թ.**, «Կանաչ և սև. արցախյան օրագիր», Երևան-Ստեփանակերտ, 2008 թ., **Բարսեղյան-Կրպեյան** Իր.., «Ղարաբաղյան շարժման նախապատրաստական փուլի պատմությունից. Թաթուլ Կրպեյանի և Իգոր Մուրադյանի համագործակցությունը», Երևան, 2018 թ. և այլն:

լրագրագետների պատշաճ ուշադրությանը: Առաջին անգամ մամուլի տարբեր օրգանների գործելաոճը, հրապարակախոսությունը, լրագրողական մոտեցումը փաստական նյութի հիման վրա քննվում են գիտականորեն, վեր են հանվում ժանրային, ոճական առանձնահատկությունները, դասակարգվում են թեմատիկ խմբերը, պատերազմական լրագրության խնդիրները, մարտահրավերները և այլն: ՀՀ և ԼՂՀ անկախության ամրապնդման, պետական շինարարության, հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի և առկա այլ խնդիրների լուծման ճանապարհին կարևորվում է ղարաբաղյան շարժման և մամուլի հրապարակումներում արտացոլված պատմության վերաիմաստավորումը: ԼՂՀ կարգավիճակին, ազատամարտին և դրա ընթացքում ունեցած կորուստներին ու ձեռքբերումներին, տեղահանված հայերին, ավերված պատմամշակութային հուշարձաններին, հայկական բնակավայրերին առնչվող հիմնախնդիրները պահանջում են հստակ պատկերացում ունենալ նորագույն պատմության, հատկապես ղարաբաղյան շարժման ընթացքում մամուլի մասին: Այս խնդիրները պետք է դիտարկել ոչ միայն հայոց ազգային-ազատագրական պայքարի և մասնավորապես 1988-ին սկիզբ առած նրա նոր փուլի համատեքստում, այլև ողջ ԽՍՀՄ-ում տեղի ունեցած համընդհանուր վերափոխումների, ժողովրդավարական գործընթացների ընդհանրության մեջ: Ահա թե ինչու է անհրաժեշտ բազմակողմանի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա կատարել ոչ հեռու անցյալի վերաիմաստավորում լրագրագիտական չափանիշներով:

Ղարաբաղյան շարժումը, ազատագրական պատերազմը գիտական շրջանակներին առավելապես հայտնի է որպես պատմական թեմա, սակայն մամուլը նաև պատմագիտական ուսումնասիրությունների աղբյուր է, իսկ հայաստանյան մամուլում ղարաբաղյան շարժման արձագանքների քննությունը դեռևս չի դարձել լրագրագետների հետազոտության առարկա:

Աշխատանքի գլխավոր **գիտական նորույթն այն է**, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող մամուլի հրապարակումների հիման վրա նորովի են մեկնաբանվում ղարաբաղյան շարժման, համազգային գոյամարտի և ԼՂՀ ստեղծման նախադրյալները, նաև՝ անկախ մամուլի ծնունդը՝ հայ-ադրբեջանական հակամարտության պայմաններում: Առաջին անգամ մամուլի տարբեր օրգանների գործելաոճը, հրապարակախոսությունը, լրագրողական մոտեցումը փաստական նյութի հիման վրա քննվում են գիտականորեն, վեր են հանվում ժանրային, ոճական առանձնահատկությունները, դասակարգվում են թեմատիկ խմբերը, պատերազմական լրագրության խնդիրները, մարտահրավերները և այլն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքում փորձել ենք հայաստանյան մամուլի և մամուլի հրապարակումների վերլուծություն կատարել՝ հասկանալու համար, թե մամուլը ինչ չափով և ինչպես է լուսաբանել զարգացող իրադարձությունները: Բացի այդ՝ փորձել ենք պարզել, թե ազդեցության ինչ միջոցներ է կիրառել մամուլը՝ կամա թե ակամա ուժեղացնելով հրապարակումների ներգործությունը լսարանի վրա:

Հետազոտության գլխավոր սկզբնաղբյուրը ուսումնասիրվող ժամանակահատվածի մամուլն է: Օգտագործված հայալեզու և օտարալեզու գրականությունից բացի (որում առավելապես վերհանվում են ղարաբաղյան շարժման ու ազատամարտի պատմական շերտերը)՝ արժեքավոր են նաև մամուլի հրապարակումները: Դրանք, որոշակի սահմանափակումներով հանդերձ, էական տեղեկատվություն են պարունակում ինչպես շարժման ընթացքի, այնպես էլ ժողովրդի տրամադրությունների մասին, հնարավորություն են տալիս վերականգնելու (թեկուզ ոչ լիարժեք) այն հենքը, որի վրա ծավալվում էին ղարաբաղյան շարժման իրադարձությունները: Բացի այդ՝ իրականությունն արտացոլող լրատվությամբ, իրավիճակի ավելի խորը վերլուծություններով աչքի էին ընկնում կայացման գործընթաց ապրող քաղաքական ավանդական և նոր հոսանքների տրամադրություններն արտահայտող մամուլի նոր, ոչ պաշտոնական, ընդհատակյա և ինքնահրատ օրգանների հրապարակումները: Տեղեկատվության աղբյուր էին նաև էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ընձեռած հնարավորությունների կիրառմամբ ստեղծված բազմատիրաժները, որոնք հրատարակվում էին առանձին թեմատիկ շարքերով (օր.՝ 1988թ. փետրվարյան հանրահավաքների, ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակի, սումգայիթյան ոճրագործության, դեկտեմբերյան երկրաշարժին հաջորդող զարգացումների մասին և այլն):

Ուսումնասիրության նյութ ընտրելով ղարաբաղյան շարժում-ժամանակի մամուլ առնչությունները՝ հանգամանորեն անդրադարձել ենք այն պարբերականներին, որոնք նշանակալի դեր են ունեցել ժամանակի հայաստանյան լրատվական դաշտի ձևավորման գործում: Չեն անտեսվել նաև կարճատև գոյությամբ պարբերականները, եթե ինչ-ինչ դերակատարություն ունեցել են մեզ հետաքրքրող խնդրում: Քննության են առնվել «Սովետական Հայաստան» (հետագայում՝ «Խորհրդային Հայաստան», «Հայաստան»), «Հայաստանի Հանրապետություն», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ», «Անկախություն», «Ազգ», «Ազատամարտ», «Երկիր» թերթերի և «Ոգնի» պարբերականի (առաջինն էր, որ անդրադարձավ արցախահայության պահանջին) հրապարակումները: Այս պարբերականների ընտրությունը պայմանավորված է ընթերցողների շրջանում դրանց ունեցած հեղինակությամբ և ուսումնասիրվող ժամանակաշրջանում ամենամեծ տպաքանակով: Ուսումնասիրության համար արժեքավոր հրապարակումներ են առանձնացվել և աշխատանքում ներկայացվել նաև «Մունետիկ», «Հայրենիքի ձայն», «Գրական թերթ», «Դրօշակ» և այլ պարբերականներից:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում են մեր առջև դրված խնդրի օբյեկտիվ հետազոտման սկզբունքը, պատմահամեմատական վերլուծությունը: Աշխատանքը գրելիս կիրառել ենք մեդիաուսումնասիրության մեթոդներ և սկզբունքներ՝ մասնավորապես բովանդակային քննության, համեմատական, պատմաքննական, համադրական, վերլուծական և այլ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրած ժամանակաշրջանն ընդգրկում է 1988-1994 թթ.-ը՝ արցախյան շարժման սկզբնավորումից մինչև հրադադարի հաստատումը, սակայն մի շարք հարցերի անդրադառնալիս չեն շրջանցվել նաև թեմային առնչվող և մինչև 1988-ը տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններն ու դրանց լուսաբանումը:

Ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է հայ ժողովրդի համար իրադարձություններով հարուստ այդ շրջանի վճռորոշ դերով, որը դիտարկել ենք խորհրդային և նորանկախ երկրի մամուլի տեսանկյունից՝ օժտված ժամանակաշրջանին հատուկ սկզբունքներով, մոտեցումներով: Աշխատանքում պահպանված է զարգացող իրադարձությունների ու դրանք ներկայացնող հրապարակումների ժամանակագրությունը:

Ատենախոսությունը պայմանականորեն բաժանված է երկու մասի. Արձագանքներ, որոնք վերաբերում են Խորհրդային Միության վերջին տարիներին, և արձագանքներ, որոնք արդեն նորանկախ երկրի մամուլի պատկերն են վեր հանում: 1991 թ.-ի սեպտեմբերի 21-ից՝ Հայաստանի անկախացումից հետո հայ հասարակական-քաղաքական կյանքը շեշտակի փոխեց զարգացման ուղին՝ մտնելով բոլորովին նոր շրջափուլ: Անտարակույս է, որ լրագրությունը չէր կարող չարձագանքել այդ փոփոխություններին: Քանի որ ղարաբաղյան շարժումը համընկել էր անցումային շրջանի հետ, բնականաբար լրագրությունն էլ անցումային շրջան էր ապրում: Հասարակարգի փոփոխությունը նոր կենսաձև թելադրեց անկախ Հայաստանին, պարտադրված պատերազմում հայտնված Լեռնային Ղարաբաղին և իրականության արտացոլման նոր ձևեր՝ հայաստանյան լրագրությանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում տպագրած ութ գիտական հոդվածներում:

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ «Ղարաբաղյան շարժման ակունքները Խորհրդային Հայաստանի մամուլում» (բաղկացած է երկու ենթագլխից), «Ղարաբաղյան շարժման լուսաբանումը խորհրդային վերջին տարիներին և մամուլի դերը հանրության արժեքային-գաղափարական դաշտի ձևավորման մեջ» (բաղկացած է երկու ենթագլխից), «Ղարաբաղյան շարժումը և անկախ Հայաստանի մամուլի ձևավորումը» (բաղկացած է երկու ենթագլխից), եզրակացություններից, օգտագործված գրականության և մամուլի ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը, մշակվածությունը, տեսական ու մեթոդական հիմքերը, աշխատանքի կառուցվածքը և այլն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼՈՒՄ
(1987-1988 թթ.)

Աշխատանքի առաջին գլխում նպատակահարմար ենք համարել ղարաբաղյան շարժման ծնունդը և դրան առնչվող խնդիրները քննել ազգային շարժումների և գաղափարախոսության համադրմամբ՝ միաժամանակ դիտարկելով առաջին արձագանքները մամուլում: Ենթագլուխների որոշակի հաջորդականությամբ փորձել ենք ընդգծել նաև ղարաբաղյան շարժման դրդապատճառների, արցախահայության պահանջների հաջորդականության տրամաբանությունը և այդ համատեքստում՝ մամուլի հրապարակումները:

Առաջին ենթագլխում **(«Ղարաբաղյան հիմնախնդիրը՝ ազգային շարժումների և գաղափարախոսության համատեքստում»)** քննվում են ազգային շարժումներն ու դրանց առանձնահատկությունները՝ իբրև ժողովուրդների պայքար հանուն ազատության և ինքնուրույնության: Ներկայացվում են ազգային-ազատագրական շարժումների մի շարք օրինակներ, առանձնացվում ազգային շարժումների փուլերը՝ սկսած լեզվի կիրառության հավասար հնարավորության պահանջից մինչև ազգային-մշակութային ինքնուրույնություն ունենալը, ապա ազգային ինքնորոշման և անկախ պետություն ձևավորելու հրամայականը[2]: Այս առումով ընդգծվում է 1985 թ. ապրիլին ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի հայտարարությունը վերակառուցման քաղաքականության մասին, ինչը խորհրդային կայսրության փոքրաթիվ ժողովուրդներին, այդ թվում՝ հայերին, հնարավորություն տվեց բարձրաձայնելու ազգային հարցերի մասին[3]:

Սեղմ անդրադառնալով ղարաբաղյան խնդրի ծագմանը, տարիների ընթացքում ավելի խորացող ու խճճվող խնդրի ակունքներին՝ ընդգծել ենք ազգային խնդիրների համար պայքարի ելած հայության պահանջի անհրաժեշտությունն ու իրականացված գործնական քայլերի նպատակահարմարությունը:

Երկրորդ՝ **«Ղարաբաղյան շարժման սկզբնավորումը և առաջին արձագանքները մամուլի հրապարակումներում»** ենթագլխի խնդիրն է ուրվագծել հայաստանյան մամուլի պատկերը՝ ըստ բովանդակային և քանակական արձագանքների: Այստեղ արձանագրենք, որ արցախահայության համար ժամանակը թեև նոր

---

[2] **Леонтьев К.**, Сборник статей, Մոսկվա, 1992 թ., էջ 225:

[3] Տե՛ս **Հակոբյան Թ.**, Կանաչ ու սև. արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008 թ., էջ 426:

հուն էր մտնում, մինչդեռ ժամանակի մամուլը կրավորական դիրք էր գրավել՝ ապատեղեկատվություն տարածելով կամ լավագույն դեպքում լռելով: Խորհրդային Հայաստանի պաշտոնական մամուլում արցախահայության պահանջատիրությանն առաջինն անդրադարձավ «Ոզնի»-ն՝ տպագրելով Զորի Բալայանի «Հիմա՞ էլ լռենք» ծավալուն հոդվածը, որտեղ մտահոգություն էր հնչում, որ «հայ գրողներս զարմանալի կերպով ժամանակի ու ժողովրդի առաջ կանգնել ենք տառացիորեն դատարկաձեռն… Ասես հնարավոր է գտնել մեկ ուրիշ ժողովուրդ, որն ապրել է մի ճիվաղի կազմակերպած ցեղասպանությունը և մտավորականության ջարդերը հետագայում: Ինչո՞ւ չենք այդ մասին ազատ գրում»[4]:

Շարժման մեկնարկը տրվեց բնապահպանական խնդիրներին նվիրված հանրահավաքներով, որոնք անցկացվում էին 1987-ի աշնանը Երևանում: Հենց բնապահպանական (էկոլոգիական) շարժմանը նվիրված հանրահավաքների ժամանակ էլ առաջին անգամ բարձրաձայնվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հարցը[5]: Իսկ Արցախում առաջին զանգվածային ցույցերին, սկիզբ առած պատմական իրադարձություններին լրատվական առաջին անդրադարձը կատարվել է մեկ շաբաթ անց միայն, այն էլ պաշտոնական հաղորդագրության տեսքով: Ժողովրդական-հասարակական կենդանի արձագանքներ տպագրելու համար մամուլին պետք եղավ ևս 10 օր:

Փաստորեն, Ղարաբաղը դարձավ հայությանը միավորող ազդակ, մինչդեռ համազգային իրադարձությունները լուսաբանելու հարցում խորհրդային կենտրոնական և հանրապետական մամուլը սկզբնական շրջանում միակողմանի էր կամ սակավախոս: Այնուհանդերձ, հայաստանյան մամուլը աստիճանաբար սկսեց ազատականանալ, նաև ազգայնանալ: Այդ միտումը սաստկացավ 1988 թ. ղարաբաղյան շարժման ակտիվացմանը զուգահեռ: Ըստ էության մամուլի գործելաոճը պայմանավորված էր երկրում ստեղծված քաղաքական իրավիճակով, մասնավորապես՝ ծավալված համազգային շարժմամբ: Տեղական լրատվամիջոցներում այդ տարիներին ազգային պատմական հարցերը սկսեցին ներկայացվել նոր լույսի ներքո: Բնական է, որ ազգայինի վերահմաստավորումը համարժեք գործելակերպ էր թելադրում մամուլին և լրագրողներին: Տեղեկատվական-քարոզչական գործողությունները, որոնք հատկապես սկզբնական շրջանում ակտիվ բնույթ չէին կրում, միտված էին արցախահայության պահանջատիրության վերհանմանն ու տարածմանը: Զարգացող իրադարձությունները հետապնդում էին պատմական արդարության, վտանգված ազգային արժանապատվության վերականգնման նպատակ: Խորհրդային Հայաստանի մամուլը սկսեց գրել մինչ այդ փակ թեմաների մասին որոշակի զգուշավորությամբ, ինչն արտահայտվում էր լրագրային ժանրի և վերնագրի ընտրությամբ, հետևողականության դրսևորմամբ, նյութի կառուցվածքով, ծավալով, ձևավորմամբ, լուսանկարի առկայությամբ և լրատվական այլ առանձնահատկություններով: Ըստ

---

[4] «Ոզնի», հուլիս, Երևան, 1987թ.,:

[5] «Անկախություն», 7 նոյեմբերի, Երևան, 1987 թ.:

էության ղարաբաղյան շարժումը միաժամանակ կարևոր շրջափուլ ստեղծեց նաև մամուլի համար. պատասխանատվության ու անպատասխանատվության շրջան, երբ հայաստանյան մամուլը փորձում էր արձագանքել զարգացող իրադարձություններին, և երբ լռեցվում էին մամուլի արձագանքները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ (1988-1991 թթ.)

Այս գլխի քննության առարկան մամուլի այն հրապարակումներն են, որոնք լուսաբանում են զարգացող ղարաբաղյան շարժումը՝ ընդ որում խորհրդային գաղափարախոսության պայմաններում, և մամուլի դերը հանրության արժեքային-գաղափարական դաշտի ձևավորման գործում: Այս գլուխը ևս ներառում է երկու ենթագլուխ:

Առաջին՝ **«ԼՂ-ի իրադարձությունների լուսաբանումը խորհրդային գաղափարախոսության պայմաններում»** ենթագլխի նպատակն է ցույց տալ լրատվական դաշտի ընդհանուր պատկերը՝ հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժերով պայմանավորված: Մամուլը դեռևս կրում էր խորհրդային գաղափարախոսության կնիքը, բայց ազատականացման քայլերն ընդգծված բնույթ ունեին: Այդ շրջանի հայաստանյան մամուլը ուղղված էր ղարաբաղյան շարժմանը՝ իր բոլոր դրսևորումներով: Ցանկացած ոլորտի առնչվող հրապարակում տարբեր թելերով կապվում էր Ղարաբաղին: Այդ առումով առանձնացվել են այն հիմնական ուղղությունները, որոնցով աչքի էին ընկնում տվյալ ժամանակաշրջանի մամուլի հրապարակումները, մասնավորապես՝ Ղարաբաղի խնդիրը ներկայացվում էր վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով, ինչն արտահայտվում էր պաշտոնական լրահոսում, խորհրդային կենտրոնական իշխանության ուղերձներում, ժողովուրդների բարեկամության քարոզչություն իրականացնելիս, նաև ռուսական մամուլից արված արտատպումներում: Զուգահեռաբար մամուլում նկատվում էին հուսահատ տրամադրություններ, հոգեբանական անկում հատկապես այն հրապարակումներում, որոնք վերաբերում էին սումգայիթյան ջարդերին և դրան հաջորդած դատավարությանը, «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության կասեցմանը, Սպիտակի երկրաշարժին, ցույցերին, գործադուլներին, դասադուլներին, պարետային ժամին, Բաքվի ջարդերին և առհասարակ՝ պատերազմական լրահոսին: Հետազոտության ընթացքում ակնհայտ է դառնում, որ մամուլը նաև ղարաբաղյան խնդրի լուծման լավատեսական հեռանկար է ուրվագծում՝ տպագրելով խաղաղության կոչեր մտավորականների կողմից, խաղաղեցնող տրամադրություններ փոխանցող գրական գործեր, կյանքը բնականոն հուն վերադարձնելու ուղերձներ, փոխանցելով լավատեսական տրամադրություններ: Հենց այսպիսի պայմաններում էլ մամուլն ու տեղեկատվական հարթությունը խնդիրների ու դրանց լուծման որոնումների բարդ

շրջափուլում է հայտնվում: Մամուլի հիասթափեցնող գործունեությամբ պայմանավորված՝ սկսվում է վստահության ճգնաժամ, ավելին՝ ի հայտ են գալիս մամուլի բնականոն գործունեության խոչընդոտներ՝ լրագրային թղթի պաշարների սպառումից մինչև տպագրական խնդիրներ և պարբերականներն ընթերցողներին հասցնելու դժվարություններ: Մինչդեռ խորհրդային ապատեղեկատվությունը դառնում է ազատ մամուլի ստեղծման նախադրյալ, մամուլի պատմության նորագույն շրջանի մեկնարկ, նաև մամուլի գործունեության կարգավորման իրավական մեխանիզմների ներդրում («Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի ընդունում, 1991 թ.) և այլն:

Ի վերջո՝ արցախյան հուժկու շարժումն անակնկալի բերեց Հայաստանի գիտական, գաղափարախոսական և լրատվական համակարգի հաստատություններին: Այդ կենտրոնները կարծես պատրաստ չէին և ոչ էլ կարողություն ու հաճախ նաև մտադրություն ունեին հակազդելու ու խափանելու հակառակորդի սանձազերծած լրատվական ագրեսիան, ճեղքելու խարդավանքները երեսպատող տեղեկատվական շրջափակումները: Խորհրդային Միության վերջին տարիներին խոսվում էր լրատվական շրջափակման ճեղքման մասին ավելի հաճախ հենց մամուլի կողմից: Բայց հայաստանյան մամուլը սկսեց ակտիվորեն անդրադառնալ ղարաբաղյան շարժմանն ու դրա զարգացումներին 1991-ի գարնանը, երբ ակնհայտ էր, որ փլուզվում է Խորհրդային Միությունը: Թե՛ հայկական, թե՛ ռուսական մամուլը որակական փոփոխություն կրեցին:

Երկրորդ՝ **«Հայ հրապարակախոսների արցախյան շեշտադրումները և դրանց դրսևորումները մամուլում՝ լարանի վրա ներգործության համատեքստում»** ենթագլխում ներկայացված է հայաստանյան մամուլում հրապարակախոսության առանձնահատուկ տեղն ու նշանակությունը՝ հատկապես հեղինակավոր մտավորականների ներկայացվածության առումով: Ընդ որում հրապարակախոսների շեշտադրումները սոսկ գնահատականներ չեն, դրանք ապագային ուղղված հստակ ուղերձներ են: Շարժման սկզբնավորման, զարգացման, հետագայում նաև պատերազմական գործողություններով պայմանավորված՝ հրապարակախոսական հոդվածներում փաստական արժեքավոր տեղեկատվություն կա արցախյան հիմնախնդրի վերաբերյալ: Այստեղ, բնականաբար, կարևոր ներդրում ունեն հրապարակախոսները՝ հիմնականում գրողները*: Մեր ուսումնասիրության համար ընտրված ժամանակահատվածում հայաստանյան մամուլում ամենահաճախ հանդիպող մտավորական հրապարակախոսների անուններն էին՝ Արմեն Հովհաննիսյան, Սիլվա

---

* Շարժման ակունքներում մտավորականության լավագույն ներկայացուցիչներին էին: Առանձնապես մեծ ջանքերի հետ էին կապված ժողպատգամավորների արտահերթ նստաշրջանի հրավիրման նպատակով նրանց կողմից իրականացվող նախապատրաստական (քարոզչական-բացատրական) քայլերը, հանուն պահանջատիրության ժողովրդի համախմբմանը միտված աշխատանքները, որոնք ապարդյուն չանցան:

Կապուտիկյան, Զորի Բալայան, Վարդգես Պետրոսյան, Պերճ Զեյթունցյան: Այդ շրջանում Արցախին նվիրված հրապարակախոսական նյութերում գերիշխում էին այն մտահոգությունները, որոնք վերաբերում էին Սումգայիթի և Բաքվի ջարդերին, Արցախ-Ադրբեջան հարաբերություններին՝ ժողովուրդների բարեկամու-թյան խորհրդային կեղծ կարգախոսների բացահայտման համատեքստում, խորհրդային կենտրոնական իշխանության՝ ամեն ինչ համահարթելու քաղաքականությանն ու դրա վնասներին, ինքնաճանաչողության խորքային ընկալմանն ու ազգային գաղափարախոսության արմատավորմանը, հավաքական կամքի դրսևորմանն ու պահանջատիրական ոգու ձևավորմանը, երկրի տնտեսությանը, սոցիալական վիճակին, կրթությանը և այլ հարցերի: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ղարաբաղյան շարժմանն առնչվող հայ հրապարակախոսությունն աչքի է ընկնում մի քանի հստակ շեշտադրումներով, որոնք պայմանավորում էին հայաստանյան մամուլի դիմագիծը:

Մամուլի էջերում հնչող մտավորականի ձայնը, որտեղ իրականության արտապատկերումը միախառնված էր հուզական տրամադրություններով, ներազդման մեծ լիցքեր էր պարունակում: Հուզական և զգացմունքային լինելուց բացի՝ այդ շրջանի հրապարակախոսական հոդվածներն առանձնանում էին նյութի և հարցադրումի լայն ընդգրկումով ու հրատապությամբ, հրապարակախոսների քաղաքացիական ակտիվ կեցվածքով, հստակ և խիզախ դիրքորոշումով, իրավիճակի ճշգրիտ գնահատմամբ, մեր երկրի նկատմամբ անսահման սիրով, հավատով և նվիրվածությամբ[6]: Տեղեկատվական չհայտարարված պատերազմում հայտնված հայ մտավորականներն իրենց հրապարակախոսական հոդվածներում մեծապես կարևորում էին արդարության համար պայքարի գաղափարական իմաստավորումը՝ ընդդեմ ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական տեղեկատվական քաղաքականության և կեղծարարության: Հրապարակախոսների և հրապարակախոսության պայքարը շարունակվեց նաև 1991 թվականից հետո՝ անկախ մամուլի էջերում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
(1991-1994 ԹԹ.)

Ատենախոսության երրորդ՝ եզրափակիչ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ **«Տեղեկատվական-քարոզչական գործողությունները հայ-ադրբեջանական հակամարտության շուրջ»** ենթագլխում ներկայացված է նոր իրավիճակում հայտնված հայաստանյան մամուլը՝ պայմանավորված քաղաքական կարգերի ժողովրդավարացումով, լայն հրապարակայնությամբ, ժողովրդի հասարակական գիտակցության աճով և քաղաքացիական աննախադեպ ակտիվությամբ: Ի

[6] «**Երեկոյան Երևան**», 30 դեկտեմբերի, Երևան, 1989 թ.:

վերջո՝ որակապես նոր բովանդակություն ստացավ լրատվական դաշտը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի համատեքստում: Գաղափարական սահմանափակումներն ու կուսակցական բռնատիրությունն իրենց տեղը զիջեցին խոսքի ազատությանը, ազատ մտածողությանը, թեև սկզբնական շրջանում անկախության հռչակումն էլ լիովին չնպաստեց ազատ մամուլի ձևավորման ընթացքին: Տպագիր մամուլը դադարեց զանգվածային լինելուց, թեկուզ այն պարզ պատճառով, որ տպագիր խոսքը գյուղ չէր հասնում: Բայց պատմական ճշմարտության պահանջը օրախնդիր էր, թեև ազատ մտածողության ալիքը դեռևս 1988-ին էր հասել Հայաստան և Արցախ: Ազատ մտածողությունը մեզանում նախ վերածվեց ազգային զարթոնքի՝ Արցախի ինքնորոշման գերագույն նպատակով, Սփյուռքի հետ մերձեցման գաղափարական սահմանափակումների վերացումով, հին ու նոր կուսակցությունների ազատ գործունեությամբ, և ապա փորձեց ներթափանցել հոգևոր ոլորտները: Մեծ հաշվով ժամանակը կանգնեց գաղափարական վերագնահատումների անհրաժեշտության առջև: Մամուլի բովանդակային վերակառուցումը մեծ չափով պայմանավորված էր նաև այն տեղեկատվական-քարոզչական գործողություններով, որոնք զուգահեռաբար ընթանում էին թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում:

Հայկական տեղեկատվաքարոզչական նախաձեռնությունները համակարգված չէին գործում, դրանք փորձում էին հակազդել ադրբեջանական քարոզչամեքենային համանման մեթոդներով, նաև իրականացնել սեփական շահերի պաշտպանությունն ադրբեջանական տեղեկատվական հոսքերի գնահատման, հեռանկարային և տեղային հակահարվածների միջոցով:

Երկրորդ՝ **«Պատերազմական տեղեկատվությունը մամուլում. մասնագիտական խնդիրներ և մտահոգություններ»** ենթագլխի առանցքում է ԶԼՄ-ների, մասնավորապես մամուլի բացառիկ դերակատարումը հատկապես պատերազմների ընթացքում:

1991 թ. տարեվերջից սկսած՝ ԼՂՀ-ի հայության և Ադրբեջանի հակամարտության հիմնահարցից տրամաբանորեն սկիզբ առնող գոյապայքարը ձեռք բերեց դասական պատերազմին հատուկ բոլոր հատկանիշները. հաղթանակներ և կորուստներ, խաղաղ բնակչության տեղահանում և ոչնչացում, շրջափակում, բռնագաղթ, նորագույն ռազմական տեխնիկայի կիրառում, զոհեր և վիրավորներ, ռազմագերիներ, անհայտ կորածներ և «հարկադիր կանգառում հայտնված մամուլ»[7]՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով:

ԼՂ հակամարտությունը ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար հետխորհրդային միջավայրում, ըստ էության, առաջին փորձությունն էր: Ղարաբաղյան պատերազմի լուսաբանումը հայաստանյան ԶԼՄ-ներում (մասնավորապես՝ մամուլում) որոշակի թափ ստացավ հենց 1992 թ.-ից, թեև մամուլն ուղիղ ազդեցություն չունեցավ այդ շարժման վերելքի վրա՝ երբեմն անուշադրության մատնելով կարևոր երևույթներ: Շարժումն ու պատերազմը ակտիվորեն չէին շրջանառվում մամուլում,

[7] «**Ավանգարդ**», լրագիր, 2 մարտի, Երևան, 1993 թ.:

փոխարենն առավելապես հայաստանյան ներքաղաքական կյանքն էր ներկայացվում: Ձգտելով փոքրիկ հաղթանակներ գրանցել նաև տեղեկատվական պատերազմում՝ հայ լրագրողները, պահպանելով նյութի մատուցման որոշակի սկզբունքներ, փորձում էին թաքցնել հուսահատությունը, և ընթերցողներին պատմել հերոսների ու նրանց կերտած հաղթանակների մասին[8]՝ հիմնականում ստվերում թողնելով երկու կողմերի դաժանությունների մասին տեղեկատվությունը:

1992 թ.-ից որոշ հայկական թերթեր ունեին սեփական թղթակիցներ Լեռնային Ղարաբաղում: ԽՍՀՄ փլուզումից հետո հակամարտության գոտում աշխատող լրագրողները ձեռք բերեցին նոր մասնագիտացում, որը դեռ չէր ստացել էքստրեմալ ժուռնալիստիկա անվանումը, հետևաբար նոր ժանրում աշխատելու փորձառություն և հմտություն ոչ ոք չուներ: Եվ հենց եզրույթներն էլ՝ հակամարտության գոտի, մարտական գործողությունների շրջան, շփման գիծ և այլն, հայտնվեցին ավելի ուշ[9]:

Արդյունքում ղարաբաղյան շարժումը, որ ծագել էր հայության կողմից, իբրև ազգային ինքնագիտակցության դրսևորում[10], 1994 թ.-ի մայիսի 12-ի զինադադարով մտավ նոր փուլ՝ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» դասագրքային դարձած ձևակերպմամբ: Զինադադարի ռեժիմի մասին համաձայնությունը պահպանվեց մինչև 2016 թ.-ի ապրիլի 2-ը (թեև կրակոցներ ժամանակ առ ժամանակ հնչում էին): Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո կրակակետերը լռեցին մինչև 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ը: Այս համատեքստում քաղաքական, ռազմական, դիվանագիտական ճակատներից զատ լրագրությունն էլ անելիքներ ուներ և շարունակում է ունենալ՝ իմաստավորելով արցախյան 90-ականների հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ղարաբաղյան հիմնախնդիրը 20-րդ դարի հայ քաղաքական և հասարակական գիտակցությունը պայմանավորող կարևորագույն իրողություններից է: Սակայն Ղարաբաղի ձգձգվող հիմնահարցի քաղաքական լուծումը պահանջում էր համարժեք արձագանք ժամանակի մամուլում, ինչը խորհրդային գաղափարախոսության պայմաններում լիարժեք չէր իրականացվում: Արդյունքում մի կողմից՝ փաստերն ու իրականությունը լռության էին մատնվում, մյուս կողմից՝ որոշակի փաստերի քողարկմամբ տարածվում էր կես-ճշմարտությունը:

---

[8] «Ազատամարտ», թիվ 35, օգոստոս, Երևան, 1992 թ.:

[9] «Журналисты на войне в Карабахе», Մոսկվա, 2002 թ., էջ 24:

[10] «Գարուն», N 4, Երևան, 1994 թ.:

2. Հատկապես շարժման առաջին տարիներին հասարակության զգալի մասը բավարար տեղեկատվություն չուներ ո՛չ հիմնախնդրի առկա վիճակի, ո՛չ հնարավոր զարգացումների մասին՝ չնայած ՁԼՄ-ների տեղեկատվական գործառույթը կարևորագույն դեր ունի ցանկացած հակամարտությունում: Արդյունքում՝ մամուլը լիարժեք չէր լուսաբանում, չէր վերլուծում, չէր տալիս հիմնախնդիրը համակողմանի և լիարժեք դիտարկելու հնարավորություն. քաղաքական դիսկուրսը չէր տեղափոխվում մեդիամիջավայր, տվյալ դեպքում՝ մամուլ:
3. Խորհրդային Հայաստանի մամուլում արցախահայության պահանջատիրությանն առաջինն անդրադարձավ ոչ թե պաշտոնական, քաղաքական մամուլը, այլ «Ոզնի» երգիծաթերթը՝ բավական ծավալուն և փաստարկված հոդվածով, նաև՝ համարձակ շեշտադրումներով: Արդյունքում՝ պարբերականի այս քայլը չդարձավ այն շարժիչ ուժը, որ ստիպի մամուլի մյուս օրգաններին ևս խոսել հիմնահարցի մասին: Ավելին՝ պաշտոնական մամուլը երգիծաթերթի այդ հրապարակումից հետո շարունակեց լռություն պահպանել ամիսներ շարունակ:
4. Խորհրդահայ մամուլի սակավախոսությունը որոշ չափով լրացրին ինքնահրատ պարբերականները՝ շատ դեպքերում իրենց խոսքն ընթերցողին հասցնելու համար ցուցաբերելով ոչ լրագրողական հմտություններ:
5. Խորհրդային մամուլին լուրջ մարտահրավեր նետեց հայ հրապարակախոսությունը՝ իրականության քաղաքական ընկալմամբ և զգայական յուրօրինակ մեկնաբանմամբ: Այդ առումով աչքի ընկան հեղինակավոր մտավորականները՝ փորձելով հանրության համար բացահայտել երկրի քաղաքական և հասարակական կյանքի իրական պատկերը, ընդ որում ոչ միայն գնահատականներ տալով, այլև ապագային ուղղված հստակ ուղերձներ հնչեցնելով:
6. Նորանկախ հանրապետությունում անկախ մամուլի ստեղծման առաջին փորձերը համընկան պատերազմի և քաղաքական անկայուն իրավիճակի հետ, ինչը չէր կարող ազդեցություն չունենալ մամուլի գործունեության և տեղի ունեցող փոխակերպումների վրա:
7. Մամուլում հայտնվեցին տեղեկատվական-քարոզչական գործողությունների առանձին դրսևորումներ: Եվ քանի որ ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական-քարոզչական աշխատանքը չէր կրում համակարգային բնույթ, և հակամարտության շուրջ տարվող հայկական տեղեկատվաքարոզչական աշխատանքը հիմնականում արձագանքողի դերում էր, հետևաբար հայաստանյան մամուլը գործում էր կիսամասնագիտական սկզբունքներով՝ ստորադասված առանձին քաղաքական ուժերին և արտահայտելով սեփական շահերը:

8. Հետխորհրդային հայաստանյան մամուլը ըստ էության խորհրդահայ մամուլի հետնորդն է, բնականաբար, ժամանակի պահանջներից ելնելով ձևավորվող նոր առանձնահատկություններով: Այդ առումով առաջին փոփոխությունը միտված էր կայուն լրատվական համակարգին: Արդյունքում՝ անկախ Հայաստանի մամուլում երկարահունչ հոդվածներին փոխարինեցին հակիրճ լուրերը, թղթակցությունները, ռեպորտաժները, ակնարկները, որոնք ավելի արդիական էին դարձնում ավանդական կուսակցական գաղափարներով կաղապարված պարբերականների համապատկերը: Բոլոր դեպքերում այդ փոփոխությունները ժամանակի պահանջ էին, որոնց անհրաժեշտությունը բխում էր մամուլի գլխավոր առաքելության նորացումից:
9. Պատերազմի և խաղաղության թեմայի լուսաբանումն իր առանձնահատկություններն ունի, ինչը լուրջ փորձություն էր և մեծ պատասխանատվություն հայաստանյան մամուլի և լրագրողների համար: Ասել է թե՝ շատերը ռազմական լրագրող դարձան իրադարձությունների զարգացումներով պայմանավորված՝ չունենալով համապատասխան մասնագիտացում, ճակատում կողմնորոշվելու և հակամարտություն լուսաբանելու հմտություն, մինչդեռ զգայուն կոնֆլիկտների լուսաբանումը հատուկ պատրաստվածություն է պահանջում:
10. Լրագրողների աշխատանքը պատերազմի տարիներին խոչընդոտում էին շրջափակումը, հեռախոսային կապի հաճախակի ընդհատումը, էլեկտրաէներգիայի խափանումը, լրագրային թղթի պաշարների սպառումը և դժվարությունների մի ամբողջ շարք, որը, անշուշտ, իր ազդեցությունն էր թողնում նաև հրապարակումների բովանդակության վրա: Լրագրողներն ըստ էության ազատ էին տեղեկատվության հավաքագրման գործում, բայց խոչընդոտների առաջ էին կանգնում այն տարածելու հարցում:
11. 1988-1994 թվականների պատմական բարդ ժամանակահատվածը պատասխանատու գործելակերպ էր թելադրում նաև մամուլին: Հետևաբար, այդ տարիներին հանրապետությունում վերափոխումները լրատվամիջոցներից պահանջում էին համապատասխան գործելաոճ, նոր մոտեցումներ, արտահայտման նոր եղանակներ, որոնցով էլ ըստ էության հնարավոր էր ձևավորել իրականության հնարավորինս օբյեկտիվ պատկերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Մկրտիչյան Ա.**, Հայ հրապարակախոսների արցախյան շեշտադրումները և դրանց դրսևորումները հայաստանյան մամուլում (1988-1991 թթ.), «Գիտական Արցախ», Երևան, 2022 թ., էջ 175-186:
2. **Մկրտիչյան Ա.**, Անկախ Հայաստանի մամուլի ձևավորումը՝ հայադրբեջանական հակամարտության համատեքստում (1991-1994 թթ.), «Պատմություն և քաղաքականություն», Երևան, 2022 թ., էջ 15-26:

3. **Մկրտիչյան Ա.**, Իրավական պայքարի առանձնահատկությունները և դրա դրսևորումները խորհրդահայ մամուլում՝ ղարաբաղյան շարժման համատեքստում (1988-1991 թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Երևան, 2020 թ., № 1 (23), էջ 207-213:
4. **Մկրտիչյան Ա.**, Պատերազմական տեղեկատվությունը և դրա ներկայացման առանձնահատկությունները հայաստանյան մամուլում (1991-1994 թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Երևան, 2019 թ., էջ 146-151:
5. **Մկրտիչյան Ա.**, Տեղեկատվական միջավայրի փոխակերպումները և հայաստանյան մամուլի հիմնախնդիրները՝ ղարաբաղյան շարժման համատեքստում (1988-1991 թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Երևան, 2018 թ., էջ 186-195:
6. **Մկրտիչյան Ա.**, Ղարաբաղյան շարժում. «Ազգայինի» վերաիմաստավորման հրամայականը հայաստանյան մամուլում (1988-1991 թթ.), Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Երևան, 2016 թ., էջ 322-328:
7. **Մկրտիչյան Ա.**, ԼՂ-ի հակամարտության լուսաբանումը հայաստանյան մամուլում հայ-ադրբեջանական պատերազմի առաջին փուլում (1991-1992 թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու Բ, Երևան, 2013 թ., էջ 329-334:
8. **Մկրտիչյան Ա.**, Ղարաբաղյան շարժման ծնունդը և մամուլը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, N 3, Երևան, 2011 թ., էջ 77-87:

АННА ШАГЕНОВНА МКРТИЧЯН
Отзывы карабахского движения в прессе Армении 1988-1994 гг.

РЕЗЮМЕ
Диссертация на соискание ученой степени кандидата филологический наук по специальности 10.01.06 - «Журналистика»

Защита состоится 29.06.2022 г. в 12:00 на заседании специализирванного Совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу: Ереван, улица Хачатура Абовяна 52/а, корпус филологического факультета, аудитория 202.

Работа посвящена освещению в армянской прессе карабахского движения в 1988-1994 гг. Проанализированы публикации ведущих периодических изданий, посвященных Нагорному Карабаху, отмечены особенности этих публикаций, их тематическая значимость и журналистские подходы. Работа представляет собой попытку дать комплексное представление о роли и значении прессы в период новейшей истории армянского народа, а также проанализировать их влияние на развитие событий, общественное сознание и настроения. При этом проанализированы не только особенности прессы, но и подходы журналистов, публицистов-интеллектуалов в контексте воздействия на аудиторию.

Исследуемая тема сегодня как никогда актуальна, так как Республика Арцах – это государство, существующее более трех десятков лет с устоявшимися государственными институтами, при этом еще не признанное ни одним государством мира. Прошли десятилетия с начала движения. Более того, разрешение этого конфликта является одним из внешнеполитических вопросов великих держав, различные геополитические проблемы стран, взявших на себя роль посредника, преследуют свои интересы с целью установления, восстановления, политического и экономического выравнивания своего влияния в регионе. Более того, учитывая итоги арцахской войны 2020 года, непрекращающиеся активные «бои» на информационном поле. С этой точки зрения данное исследование может иметь определенное значение для освещения сути проблемы. Нынешняя ситуация является более чем основанием для изучения истории армянского Арцаха с разных точек зрения. В этом аспекте большое значение имеет исследование медиа параллельно с политическим, военным и дипломатическим фронтами.

Диссертация представляет собой попытку научно осмыслить роль армянской прессы в этот период с точки зрения влияния на общество. Результаты нашего исследования могут быть использованы для более систематических исследований, которые будут посвящены влиянию прессы на аудиторию или роли прессы в целом в конфликтах. Представленный материал и сделанные выводы могут быть использованы для создания более обобщенных работ по истории армянской печати в указанный период и освещения конфликтов, создания курсов лекций по данной теме. Представленное исследование может предоставить материал для исследований в области СМИ, конфликтной журналистики, информационных войн, психологии и других научных дисциплин. Положения диссертации могут быть полезны и для практической журналистики.

Цель диссертации - всесторонне изучить особенности журналистского освещения карабахского движения, выявить их основные закономерности в 1988-1994 гг., также в ведущих армянских периодических изданиях, а также роль прессы в развитии событий, в общественных настроениях в условиях советской идеологии, и в первые годы независимой Армении.

Основная научная новизна работы заключается в том, что на основе впервые вводимых в научный оборот публикаций прессы интерпретируется по-новому и раскрываются предпосылки карабахского движения, национальной борьбы за создание НКР, зарождения независимой прессы.

Диссертация состоит из введения, трех глав, каждая из которых состоит из двух подглав: «Истоки карабахского движения в печати Советской Армении», «Освещение карабахского движения в последние годы Советского Союза, роль прессы в формировании ценностей и идеологии общества» и «Карабахское движение – формирование независимой армянской прессы», выводов, списка используемых первоисточников и прессы.

В введении представлены актуальность темы диссертации, ее цели и задачи, новизна результатов, практическое значение, разработка, теоретические и методологические основы, структура работы у другое.

В первой главе работы «Истоки карабахского движения в печати Советской Армении» рассматриваются вопросы зарождения карабахского движения и вопросы, связанные с ним, представлены путем объединения идеологии национальных движений при одновременном наблюдении за первой реакцией в прессе. Мы постарались подчеркнуть логику мотивов карабахского движения, последовательность требований армян, в этом контексте публикации прессы. Обращается внимание на то, что карабахское движение также создает новую эпоху для прессы. период ответственности и безответственности, когда армянская пресса пыталась реагировать на события, и когда прессу заставляли замолчать.

Предметом исследования второй главы «Освещение карабахского движения в последние годы Советского Союза, роль прессы в формировании ценностей и идеологии общества» являются те публикации, которые освещают развивающееся карабахское движение в контексте советской идеологии и роль прессы в формировании ценностно-идеологического поля общества. Публицистические статьи того периода проникнуты дыханием тревоги и в то же время светлой веры.

Третья глава, «Карабахское движение – формирование независимой армянской прессы» представляет армянскую прессу в новой ситуации, обусловленной демократизацией политического строя, широкой гласностью, ростом общественного сознания народа и беспрецедентной гражданской активностью. В итоге медиа получили новый контент в контексте нагорно-карабахской проблемы.

Анализ тщательно изученных статей показывает, что сложный исторический период 1988-1994 годов диктовал ответственный подход и к прессе. В те годы преобразования в республике требовали от СМИ соответствующего стиля работы, новых подходов, новых способов выражения, что, собственно, и позволял сформировать максимально объективную картину действительности.

ANNA MKRTICHYAN

THE REFLECTIONS OF THE KARABAKH MOVEMENT IN THE RA PRESS 1988-1994

SUMMARY

Dissertation for the academic degree of Candidate of Philological Sciences in specialty 10.01.06 – «Journalism»

Defence day: 29.06.2022 at 12:00 pm at the session of the SCC Specialized Council (Supreme Certifying Committee) 012 at Yerevan State University.

Address: Republic of Armenia, Yerevan, Abovyan str. 52/A, YSU, Faculty of Armenian Philology, room № 202.

The present paper is devoted to the study of the Karabakh movement and its reflections in the Armenian press in 1988-1994. The peculiarities of the publications of authoritative Armenian periodicals related to Nagorno Karabakh were examined, the thematic emphases and journalistic publications were presented. The paper attempts in giving a comprehensive picture of the role and significance of the press in that period of modern history of the Armenian people, as well as to analyze their impact on developing events, public consciousness and moods. Moreover, not only the peculiarities of the press, but also the peculiarities of journalists, intellectual publicists and their articles in the context of influencing the audience were analyzed.

The topic is more actual today than ever, as the Republic of Artsakh is a state that has existed for more than three decades with well-established state institutions, while it is not yet recognized by any state in the world. Decades have passed since the beginning of the movement. Moreover, the resolution of this conflict is one of the foreign policy issues of great powers, different geopolitical powers and countries, that, assuming the role of a mediator, pursue their interests in order to establish, restore their influence in the region and to create economic and political equality. Moreover, taking into account the results of the Artsakh war of 2020, the ongoing active "battles" on the information platform, this research can be of guiding importance for covering the essence of the problem and the problem. The current situation is more than a basis for studying the history of Armenian Artsakh from different perspectives. In this sense, the research of the media field is of great importance, in parallel with the political, military and diplomatic fronts.

The dissertation is an attempt to scientifically assess the role of the Armenian press in this period in terms of developments and impact on the society. The results of our study can be used for more systematic research that will focus on the impact of the press on the audience or the role of the press, in general, in conflicts. The material presented and the conclusions made in our paper can be used to create more generalized works on the history of the Armenian press in the above-mentioned period, conflicts, coverage of sensitive topics, and lectures on the given topic in universities. This research may provide material for media studies, conflict journalism, information warfare, psychology, and other scientific disciplines. The provisions created in the dissertation can also be useful for practical journalism.

The aim of the dissertation is to comprehensively study the peculiarities of journalistic coverage of the Karabakh movement, to discover their main patterns in authoritative Armenian periodicals of 1988-1994 as well as to study the impact of the press on the developments, on the

public mood under the conditions of the Soviet ideology, during the first years of independent Armenia.

The main scientific novelty of the work is that on the basis of the press publications put into scientific circulation for the first time, the preconditions of the Karabakh movement, the national struggle for the creation of the NKR, and the birth of an independent press are interpreted in a new way.

The dissertation consists of an introduction, three chapters: "The origins of the Karabakh movement in the press of Soviet Armenia" (consists of two sections), "Coverage of the Karabakh movement in recent years of the Soviet Union: the role of the press in shaping the value and the ideological field of the society" (consists of two sections), "Karabakh movement - the formation of the independent Armenian press" (consists of two sections), conclusions, bibliography.

In the first chapter of the work, "The origins of the Karabakh movement in the press of Soviet Armenia", the birth of the Karabakh movement and the issues related to it were presented by combining the ideology of the national movements, at the same time observing the first reactions in the press. We have tried to emphasize the logic of the motives of the Karabakh movement, the sequence of the demands of the Artsakh Armenians, in that context, the press publications.

In the second chapter, "Coverage of the Karabakh movement in recent years of the Soviet Union: the role of the press in shaping the value and the ideological field of the society", the main object of the study are the publications of the press that cover the developing Karabakh movement, moreover, in the conditions of the Soviet ideology, the role of the press in the formation of the value-ideological field of the society. The publicistic articles of that period are imbued with the breath of alarm and at the same time of bright faith.

The third chapter, named "Karabakh movement - the formation of the independent Armenian press", presents the Armenian press in a new situation, conditioned by the democratization of the political order, wide publicity, the growth of the people's public consciousness, and unprecedented civic activity. Finally, the media field received a qualitatively new content in the context of the Nagorno Karabakh issue.

The detailed study of press shows that the difficult historical period of 1988-1994 dictated a responsible approach to the press as well. During those years, the transformations in the republic demanded an appropriate working style, new approaches, new ways of expression from the media, which, in fact, made it possible to form the most objective picture of reality.